ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019թ. դեկտեմբերի 3-ի նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 38-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը, հաշվի առնելով, որ օրակարգում ընդգրկված է դեկանի տարեկան հաշվետվության հարցը, իսկ համաձայն՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կանոնադրության 26-րդ կետի համաձայն՝ դեկանը չի կարող լինել դեկանի հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերի նախագահողը, և որ այդ նիստերը վարում է գիտական խորհրդի կողմից ընտրված նախագահողը՝ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանն առաջարկեց առաջադրել նախագահողի թեկնածուներ: Խորհրդի անդամների կողմից առաջադրվեց պրոֆ. Տ.Բարսեղյանի թեկնածությունը, ով բաց քվեարկությամբ ընտրվեց որպես նախագահող: Այնուհետև ախագահողը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանի տարեկան հաշվետվություն:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը հանդես եկավ ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարում գործունեության մասին հետևյալ հաշվետվությամբ.

Ներկայացվող հաշվետվությունը ամփոփում է 2019 թ. ապրիլ-դեկտեմբերին կատարված աշխատանքը, քանի որ մինչ այդ կատարված աշխատանքները ներկայացվել են ապրիլին հնգամյա հաշվետվության ընթացքում:

2019 թ.-ին ընդունվեց ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի 2019-2024 թթ զարգացման հայեցակարգն ու ծրագիրը, որում առանձնացվեցին ֆակուլտետի զարգացման հիմնական ուղղությունները: Դրանց վրա էլ հատուկ ուշադրություն է դարձվել հաշվետվությունը պատրաստելիս:

Առաջինը՝ անդրադարձ կատարեմ ուսումնական գործընթացի կազմակերպմանը, կրթության տրամադրման/մատուցման ձևի և բովանդակության բարեփոխման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

Հիմնական փոփոխություններից մեկը, որի առաջին քայլերը կյանքի են կոչվել արդեն իսկ 2019-2020 ուսումնական տարում ՝ բակալավրիատում ուսումնական ծրագրի հստակեցումն է, ինչի արդյունքում, որոշ առարկաներ փոխարինվեցին առավել արդիական, գործնական ուղղվածություն ունեցող դասընթացներով (օրինակ, ուսումնական պլան ներմուծվեց՝ «Նախադեպը քրեական իրավունքում», «Սնանկության վարույթը ՀՀ-ում» և այլ դասընթացներ, ինչպես նաև վերանայվեց որոշ դասընթացների դասավանդման հաջորդականությունը (մասնավորապես՝ «Ֆինանսական իրավունք» դասընթացի դասավանդումը տեղափոխվեց «Մարդու իրավունքներ», «Վարչական իրավունք» դասընթացների դասավանդման հաջորդող կիսամյակ), ինչը տրամաբանորեն ավելի ճիշտ է ստացվող գիտելիքների մատուցման արդյունավետության տեսանկյունից:

Բացի այդ, բակալավրիատի ուսումնական պլան ներմուծվեց խիստ արդիական, ուսանողների մոտ մեծ պահանջարկ վայելող «ՀՀ վարչական դատավարություն» հիմնական դասընթացը և ձեռնամուխ եղանք գերմանական GIZ կազմակերպության օժանդակությամբ այդ դասընթացի արդյունավետ դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի պատրաստմանը:

Այնուհանդերձ, բակալավրիատում դասընթացների վերանայման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է, ինչն առավել իրատեսական կդառնա ընդհանուր հանրակրթական ուղղվածության դասընթացների՝ հայ ժողովրդի պատմության, հայոց լեզվի դասընթացների ճակատագիրը հստակեցվելուց հետո: Ուսումնական ծրագրում դրանց պահպանման պարագայում էլ՝ դրանք պետք է բովանդակային փոփոխության ենթարկվեն՝ ընդունելության ժամանակ ստուգված գիտելիքների կրկնության գործընթացից խուսափելու, իրավաբանին անհրաժեշտ հմտություններ ուսանողին հաղորդելու՝ մասնագիտական կարողություններ ձևավորելու համար: Մենք պետք է լուծենք ևս մեկ կարևոր խնդիր՝ հնարավորինս թեթևացնենք ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի ուսանողների լսարանային ծանրաբեռնվածությունը՝ շեշտը դնելով նրանց ինքնակրթության, այդ գործընթացն հաջող իրագործելու համար՝ դասախոսական կազմի կողմից ուղղորդման ու աջակցություն ստանալու վրա: Սակայն, դա ենթադրում է ևս մեկ գործոն՝ դասախոսների ծանրաբեռնվածության գնահատման վերանայումը: Դասախոսական կազմի ներկայացուցիչների ծանրաբեռնվածությունը վաղուց արդեն չի սահմանափակվում զուտ լսարանային ծանրաբեռնվածությամբ. դասախոս-ուսանող շփումը շարունակվում է

լսարանից դուրս, այդ թվում՝ առցանց հարթակում, Moodle համակարգում, սակայն այդ աշխատանքը հաշվի չի առնվում դասախոսական կազմի ծանրաբեռնվածությունը գնահատելիս:

Հաշվետու ժամանակաշրջանում քայլեր են իրականացվել նաև մագիստրատուրայում առաջարկվող դասընթացների բարեփոխման ուղղությամբ՝ վերը նշված սկզբունքների հաշվառմամբ ներմուծվել են լրիվ նոր դասընթացներ՝ իրավական մարդաբանություն, հետազոտության պլանավորում և մեթոդներ, իրավունքի տեսության արդի հիմնախնդիրները, կոռուպցիայի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները և այլն:

Այնուհանդերձ, ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում մագիստրոսական կրթական ծրագրերը ամբողջովին վերափոխելու, այն է՝ ճյուղայինից ոլորտայինի անցնելու ուղղությամբ:

Նախատեսվում է դրանք գործարկել 2020-2021 ուսումնական տարվանից սկսած:

Ոլորտային ուղղվածության առանձին մագիստրոսական ծրագրերի մշակման ժամանակ ծագող երկու հիմնական խնդիր, այնուհանդերձ, դեռևս շարունակում է արդիական մնալ: **Դրանցից առաջինը** վերաբերում է կրթական ծրագրի համար անհրաժեշտ ուսանողների նվազագույն թվին, այն է՝ 10 հոգի, մինչդեռ կան ոլորտներ, որտեղ թեև հնարավոր ուսանողների քանակը ավելի փոքր է, սակայն դրանք աշխատանքային շուկայում կարևորվող, մոտ ապագայում բարձր պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստմանն ուղղված ծրագրեր են: Օրինակ՝ առողջապահական իրավունք, տեղեկատվական տեխնոլոգիաների իրավունք և այլն:

Երկրորդ խնդիրը՝ միջառարկայական մագիստրոսական ծրագրերի շրջանավարտներին տրվող մասնագիտացման խնդիրն է: Նշված կրթական ծրագրերը նախատեսված են ոչ միայն իրավաբանների, այլև, օրինակ՝ առողջապահական իրավունքը՝ բժիշկների համար, և բնական է, որ 1.5 տարի մագիստրատուրայում նեղ մասնագիտացում ունեցող դասընթացների ուսումնառության արդյունքում բժիշկը չպետք է ստանա իրավաբանի որակավորում, այլ՝ առողջապահական իրավունքի բնագավառի մասնագետի: Այս հարցում, անհրաժեշտ է ԵՊՀ և ՀՀ ԿԳՆ աջակցությունը՝ մագիստրոսական ծրագրերի արդյունքում տրվող որակավորումները հստակեցնելու առումով:

Գերմանական Konrad Adenauer հիմնադրամի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ լրագրողների և իրավաբանների համար «Մեդիա/տեղեկատվական իրավունք» մագիստրոսական ծրագիր մշակելու և ներդնելու ուղղությամբ: Այս առումով՝ կրկին անհրաժեշտ է հստակեցնել կրթական ծրագրի ավարտին շրջանավարտներին շնորհվող որակավորման հարցը:

Առաջիկա ծրագրերից մեկը, որը նախատեսում ենք կյանքի կոչել արդեն 2020-2021 ուսումնական տարում՝ շարունակական կրթությանը միտված ծրագրերն են, մասնավորապես՝ սերտիֆիկատով ավարտվող դասընթացների, այդ թվում՝ վճարովի հիմունքներով, հնարավորություն կտա ֆակուլտետում իրականացնել պրակտիկ աշխատողների վերապատրաստումները, ապահովել այլ մասնագիտությամբ մասնագետների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների իրավական կրթությունը:

Այնուհանդերձ, կրթական գործընթացում թերի մնացող ուղղություններից մեկը շարունակում է մնալ օտար լեզվով դասավանդվող միասնական մոդուլների բացակայությունը, ինչը մտադիր ենք կանոնակարգել 2020-2021 ուսումնական տարում: Թեև ֆակուլտետի կողմից առաջարկվում են անգլերենով դասավանդվող առանձին դասընթացներ, սակայն դրանք համակարգված բնույթ չեն կրում, արտերկրի ուսանողների շրջանում մեծ պահանջարկ չեն վայելում, ինչն էլ հաճախ հանգեցնում է նրան, որ դասախոսը ստիպված է լինում օտար լեզվով դասավանդում իրականացնել մեկ ուսանողի համար : Բնական է, որ դասախոսի համար դա արդարացված չէ ոչ ժամանակի տրամադրման, ոչ էլ՝ վարձատրության տեսանկյունից:

Թեև օտար լեզուներով առաջարկվող դասընթացները անհրաժեշտ նախապայման են ֆակուլտետի միջազգայնացման համար, սակայն պրոֆեսորադասախոսական կազմի ոչ բոլոր ներկայացուցիչներն են օտար լեզուներով դասընթացներ առաջարկում: Պետք է նկատի ունենալ, որ օտար լեզուներով դասավանդումը չի ենթադրում դասավանդում միայն անգլերենով, այլև ռուսերենով կամ ցանկացած այլ լեզվով, ուստի այս խնդրի լուծումը մեզ համար առաջնահերթ նշանակություն ունի:

Ուսումնական գործընթացի կազմակերպման կարևորագույն ուղղություններից է դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների վերահմաստավորումը, ուսումնական նյութի վերանայումը:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով շարունակվել են աշխատանքները դասախոսությունների անցկացման եղանակների արդյունավետությունը բարձրացնելու, տեսություն և պրակտիկա կապը առավել արդյունավետ ներկայացնելու, դասախոսությունները առավել գրավիչ դարձնելու և դասավանդման կիրառվող մեթոդները կատարելագործելու ուղղությամբ: Իրավունքի տարբեր ճյուղերի առանձին թեմաներով դասախոսություններ կարդալու համար հրավիրվել են տվյալ ոլորտի առաջատար մասնագետներ, այդ թվում տարբեր մասնագիտացումների դատարանների դատավորներ, դատախազներ,

Քրեակատարողական ծառայության աշխատակիցներ, փաստաբաններ: Ֆակուլտետի գրեթե բոլոր աշխատակիցները զբաղված են պրակտիկ գործունեությամբ, ինչը թույլ է տալիս ուսումնական պրոցեսում ապահովել գիտություն և պրակտիկա կապը, ուսանողներին փոխանցել պրակտիկ գիտելիքներ և հմտություններ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նաև սեմինար և գործնական պարապմունքների կազմակերպման գործընթացի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, ուսանողների վերլուծական միտքը զարգացնելու, նրանց պրակտիկ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու նպատակով շեշտը դրվել է իրավական խնդիրներ լուծելու, համապատասխան փաստաթղթեր կազմելու, կոնկրետ գործեր ուսումնասիրելու, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումների ուսումնասիրման և վերլուծության վրա: Դասավանդվող առարկաների գծով կազմված ուսումնամեթոդական ցուցումների հիման վրա ուսանողներին հանձնարարվել է կազմել հայցադիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, վճիռներ և միջանկյալ դատական ակտեր, կոնկրետ թեմաների վերաբերյալ ռեֆերատներ, ուսանողական գիտական աշխատանքներ: Դասավանդումը բակալավրիատի գրեթե բոլոր առարկաների գծով իրականացվում է առավել ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ: Նույն մոտեցումը կիրառվում է նաև մագիստրատուրայում: Ֆակուլտետի դասախոսներն աշխատում են գործնական հմտությունների ձևավորման և զարգացման համար ինչպես դասախոսության, այնպես էլ սեմինար պարապմունքի ընթացքում կիրառել ստեղծագործական մեթոդներ (աշխատանքը փոքր խմբում, սոցիալական նախագծեր, ինտերակտիվ ելույթ, սոկրատյան երկխոսություն, որոշումների ծառ, ուղեղային գրոհ, ունեցի՛ր դիրքորորշում. համառոտ ելույթ, գործնական խնդիրների շուրջ բանավեճ և քննարկում, դերային խաղեր, առանձին թեմաների ներկայացում զեկույցների ձևով): Որպես ուսումնական ռեսուրսներ օգտագործվում են ցուցադրական պիտույքներ (էլեկտրոնային պաստառներ, սխեմաներ), ուսումնական արդյունքին վերաբերող հարցաշարերի և իրավական խնդիրների շտեմարան, տրամաբանական հարցաշարեր, բանավեճերի և քննարկումների կողմնորոշող թեմաներ, դերային խաղերի սցենարներ:

Ուսուցման գործընթացի ինտերակտիվ եղանակների կիրառմանը մեծապես նպաստել է նաև ԵՊՀ-ում Moodle ծրագրի ներդրումը և ներկայումս թե բակալավրիատում, թե մագիստրատուրայում, ուսանողների հետ առավել անմիջական շփման, տեղեկատվության փոխանակման, դասավանդման, գիտելիքների ստուգման լրացուցիչ էլեկտրոնային հարթակ է ձևավորվել: Թե բակալավրիատի, թե մագիստրատուրայի բոլոր դասընթացները ներառված են այդ հարթակում, թեև դասընթացների մի մասի նյութերը դեռևս ամբողջովին

տեղադրված չեն և ընթացիկ լրամշակման գործընթացի փուլում են: **Սակայն, ինչպես արդեն նշվել է, Moodle համակարգում դասախոսի աշխատանքը խիստ աշխատատար է, ինչը, սակայն, արտացոլված չէ դասախոսի ուսումնական ծանրաբեռնվածության մեջ:** Թերևս սա այն հարցերից մեկն է, որը մոտ առաջիկայում պետք է լուծում ստանա: Դասախոսը այդ համակարգում ոչ միայն նյութեր է մուտքագրում, այլև շփվում ուսանողների հետ, ընթացիկ հետևողական ստուգումներ իրականացնում, ինչը նրանից մեծ ժամանակային ներդրում է ենթադրում :

Դասավանդման նորարական մեթոդների կիրառման նպատակով՝ ֆակուլտետի դասախոսներից երկուսը՝ Աննա Մարգարյանը և Անի Սիմոնյանը, Երազմուս + ծրագրի Պրինտել նախագծի շրջանակներում արտերկրում վերապատրաստումներ են անցել՝ դասավանդման առավել նորարական մեթոդների՝ դասավանդման գործընթացում ՏՏ տեխնոլոգիաների, տեսաֆիլմերի և խաղարկային մեթոդի կիրառմանն ծանոթանալու համար, որից հետո էլ այդ մեթոդների կիրառման դասընթացներ են անցկացրել Իրավագիտության ֆակուլտետի ավելի քան 25 դասախոսների շրջանակում: Ներկայումս էլ նման վերապատրաստումներ իրականացվում են, ինչը թույլ է տալիս դասախոսներին նորարական մեթոդները հնարավորինս կիրառել ուսումնառության գործընթացում: Սակայն, առկա են նաև այդ մեթոդների կիրառման լուրջ սահմանափակումներ : Ինտերակտիվ բազմաթիվ մեթոդների կիրառման համար Իրավագիտության ֆակուլտետը չունի բավարար լսարանային պայմաններ, կահավորվածություն, տեխնիկա, ինտերնետային կապ: Օրինակ՝ խաղարկային մեթոդի կիրառման համար անհրաժեշտ են շարժական սեղաններ, որոնց կարող են արագ, տարբեր դիրքերով իրար միացվել, շարժական աթոռներ, ինչը Իրավագիտության ֆակուլտետում շատ քիչ թվով լսարաններում է հասանելի:

Ֆակուլտետում դասավանդվող առարկաների ճնշող մեծամասնության ինչպես ընթացիկ, առանձին դեպքերում՝ նաև եզրափակիչ ստուգումները անցկացվել են գրավոր եղանակով՝ խնդիրների լուծման ձևով: Տարեցտարի հստակեցվում են խնդիրների բովանդակությունը և առաջադրվող հարցերը, միաժամանակ, փորձեր են կատարվում քննությունների անցկացման նոր մեթոդների կիրառման ուղղությամբ, մասնավորապես՝ ուսանողներին ուղարկվում է քննական առաջադրանքը, որին էլ կարող են պատասխանել իրեյնց գտվելու վայրից՝ սահմանափակ ժամանակահատվածի ընթացքում (exam at home), կամ քննական առաջադրանքին լսարանում պատասխանելիս հնարավորություն է ընձեռվում օգտվել գրականությունից (open book exam): Նման փորձն առավել տարածված է մագիստրատուրայում, օրինակ՝ Համեմատական քրեական իրավունք դասընթացի շրջանակներում:

Ուսանողների հետազոտական հետաքրքրասիրությունը խթանելու, նրանց կողմից իրականացվող հետազոտական աշխատանքն առավել արդիական և կիրառելի դարձնելու նպատակով, ամբողջովին վերանայվել է կուրսային, գիտական, ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմատիկան: Մասնավորապես, ֆակուլտետի նախաձեռնությամբ առավել արդիական գործնական խնդիրների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով ավելի քան 40 գերատեսչություններից ստացվել է տեղեկատվություն՝ առաջնահերթ ուսումնասիրություն պահանջող հիմնախնդիրների թեմատիկայով: Նշված կառույցների հետ պայմանավորվածության համաձայն՝ իրականացված հետազոտությունների արդյունքները, տրամադրվելու են համապատասխան կառույցներին՝ օժանդակելու համար պրակտիկայում առաջացած խնդիրների լուծմանը: Բնական է, որ նման մոտեցումը ենթադրում է առավել բարձր պատասխանատվություն և պահանջկոտություն նաև ուսանողի կողմից իրականացված ուսումնասիրության որակի նկատմամբ:

Գաղտնիք չէ, որ հատկապես մագիստրատուրայում, ուսանողի հետազոտական գործունեությունը խիստ կարևորվում է, սակայն հետազոտությունը հաճախ ենթադրում է ֆինանսական հենք, օրինակ՝ կրիմինալոգիական հարցումներ իրականացնելիս: Այս առումով, սակայն, ԵՊՀ-ի հնարավորություններն են սահմանափակ, ինչն էլ խոչընդոտում է հետազոտական առանձին մեթոդների կիրառմանը:

Կարևոր նշանակություն ունի նաև իրավաբանական գրադարանի համալրումը: ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետում ներկայումս գործում է ընթերցասրահ-գրադարան՝ սահմանափակ գրականությամբ, մինչդեռ աշխարհի բոլոր զարգացած իրավաբանական դպրոցներն ունեն իրենց հարուստ՝ նեղ մասնագիտական գրականություն ապահովող գրադարանները: Այս առումով՝ ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետին անհրաժեշտ է թե՛ տարածք՝ ընթերցասրահը ընդլայնելու համար, թե՛ ֆինանսական աջակցություն՝ նոր գրականություն, իրավաբանական պարբերականներ ձեռք բերելու և ֆակուլտետի գրադարան-ընթերցասրահին տրամադրելու համար:

Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, տեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում.

Արդյունավետ կրթություն ապահովելու անհրաժեշտ պայմաններից մեկը դասավանդվող դասընթացների ապահովվածությունն է դասագրքերով, ուսումնամեթոդական և օժանդակ նյութերով: Ֆակուլտետում դասավանդվող բոլոր առարկաները ապահովված են համապատասխան ծրագրերով, ընթացիկ, եզրափակիչ քննությունների և ստուգումների համար կազմվել են թարմացված հարցաշարեր,

առաջադրանքներ: Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել են մի շարք դասագրքեր «ՀՀ քրեական դատավարություն. հատուկ մաս», «ՀՀ արդարադատության համակարգը» և այլն, ինչպես նաև ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, ավարտման փուլում են վարչական դատավարության, էկոլոգիական իրավունքի և քաղաքացիական դատավարության դասագրքերը: Հաշվի առնելով հանրային ծառայության առնչությամբ մեծ պահանջարկը, այդ թվում՝ «իրավագիտություն» մասնագիտություն դասավանդող մյուս բուհերի կողմից, ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են ընթանում «Հանրային ծառայություն» ուսումնական ձեռնարկի պատրաստման ուղղությամբ:

Կլինիկական կրթություն: ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետում իրականացվող կրթական գործընթացում առանցքային նշանակությամբ առանձնանում է ԵՊՀ իրավաբանական կլինիկան: Հաշվետու ժամանակահատվածում կլինիկական կրթություն են ստացել 31 ուսանող, որոնցից 18 հոգին՝ քրեաիրավական և 13 հոգին՝ քաղաքացիական/վարչական ուղղվածությամբ: Նշված ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկայում անվճար իրավաբանական ծառայություններ են ստացել 119 քաղաքացիներ տարբեր գործերով, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գանգատ կազմելու գործերով: Վերջինիս հետ կապված ուսանողները կազմել և քաղաքացիներին են հանձնել 2 ՄԻԵԴ գանգատ, որոնցից 1-ը գրանցվել է ՄԻԵԴ-ի կողմից, մյուսի վերաբերյալ դեռ տեղեկություն չկա: Եվս 3 գանգատ ներկայումս գտնվում է մշակման փուլում և հաճախորդին կտրամադրվի պատշաճ ժամանակին: Կլինիկայում ընդունված 119 գործերից 90-ը ավարտված է, որոնցից 58-ը դրական ելքով, 29 գործ դեռևս գտնվում է ընթացքի մեջ: Դրանք շարունակվելու են մինչև գործի վերջնական լուծումը և փոխանցվելու են հաջորդ տարվա ուսանողներին հնարավոր շարունակության անհրաժեշտության դեպքում: Կլինիկական դասընթացի ավարտին ուսանողները յուրաքանչյուր տարվա նման ստացել են ավարտական վկայականներ:

Հաճախորդների մեծամասնությունը բանավոր պայմանավորվածությունների հիման վրա Իրավաբանական կլինիկա է ուղղորդվել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարի, ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակներից:

Իրավաբանական կլինիկան իրականացրել է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, որին մասնակցելու համար դիմել են **29 ուսանող**, որոնք նախապես անցել են համապատասխան վերապատրաստում: «Իրավունք բոլորի համար» ծրագրին դիմած բոլոր 29-ը ուսանողներն էլ ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործընկերներ

կազմակերպությունների հետ՝ GIZ, *ՄԱԿ ՓԳՀ-ի և «Առաքելություն Հայաստան»* բարեգործական ՀԿ-ի, համագործակցության տարբեր ծրագրերի շրջանակներում ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ իրավունքի տարբեր թեմաներով անցկացրել են դասընթացներ հանրակրթական դպրոցներում կամ ընդունելով աշակերտներին ԵՊՀ-ում: Այս տարի նույնպես Իրավաբանական կլինիկան «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում համագործակցել է միջազգային և ներպետական կազմակերպությունների հետ և սեմինարներ ու ամառային դպրոցներ անցկացրել Երևանի, Դիլիջանի, Արթիկի, Հրազդանի և Մեղրիի դպրոցներում:

2019թ. հոկտեմբերին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողները մասնակցել են *ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի* կողմից արդեն 8-րդ տարին ավանդաբար կազմակերպվող փախստականների իրավունքների վերաբերյալ ամենամյա դպրոցին, որին մասնակցում էին նաև Գավառի պետական համալսարանի, Գյումրու «Պրոգրես» համալսարանի, Երևանի Հայբուսակ, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական կլինիկաների ուսանողները:

Բացի դրանից՝ 2018-2019 ուս. տարում ԵՊՀ իրավաբանական կլինիկան *ՄԱԿ ՓԳՀ-ի և «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի հետ* կնքած հուշագրի և ձևավորած սերտ համագործակցության արդյունքում համալրվել է որոշակի նոր տեխնիկայով:

2019-2020 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է ընդլայնել համագործակցությունը կոնկրետ ոլորտներում գործունեություն ծավալող միջազգային և ներպետական կազմակերպությունների հետ՝ կլինիկական մասնագիտացված և թիրախավորված ուղղություններ հիմնելու և դրանք զարգացնելու նպատակով: Մասնավորապես, 2019-2020 ուս. տարվա համար նախատեսվում է զարգացնել համագործակցությունը *ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ*՝ ուղղված «Անչափահասների իրավունքներ» կլինիկական ուղղություն ձևավորելուն և այն կյանքի կոչելուն, ինչպես նաև «Առողջապահական իրավունք» մասնագիտացմամբ կլինիկական ծրագիր ձևավորելուն և զարգացնելուն:

Մի կարևոր նկատառում, սակայն, կապված կլինիկայի հետ: Չնայած իրականացվող մեծածավալ և տեսանելի աշխատանքին՝ ներկայումս այն հանդիսանում է որպես Էկոլոգիական իրավունքի կենտրոնի ստորաբաժանում, չունի ինքնուրույն կարգավիճակ, հաստիքներ: Բնական է, որ նման պայմաններում կասկածի տակ կարող է հայտնվել դրա գործունեության շարունակականությունը: Կարծում եմ, սա առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից է:

2. Գիտահետազոտական աշխատանք

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության կարևոր բաղկացուցիչն է կազմում գիտահետազոտական աշխատանքը: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում հրատարակվել է 90 հոդված, 4 մենագրություն, 3 դասագիրք, 5 ուսումնամեթոդական ձեռնարկ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են նաև միջազգային և տեղական գիտաժողովների՝ հանդես գալով զեկուցումներով:

Առանձնացնեմ դրանցից կարևորները՝ 2019 թ.-ի սեպտեմբերի 23-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Իրավագիտության արդի հիմնախնդիրները» վերտառությամբ միջազգային գիտաժողով՝ նվիրված ԵՊՀ 100-ամյա հոբելյանին: Գիտաժողովին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ հետ միասին զեկուցմամբ հանդես են եկել նաև Մոսկվային պետհամալսարանի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Շպեերի համալսարանի, Միացյալ Թագավորության Նոթինգեմի Թրենդ համալսարանի ճանաչված պրոֆեսորներ Սուրեն Ավագյանը, Լիոնիդ Գոլովկոն, Մարգարիտ Զեկելմանը և Պաուլա Մոֆֆաթը:

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի անդամները մասնակցել են Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի 32-րդ լիագումար նիստին, Եվրոպայի խորհրդի Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեի (CDCJ) 94-րդ լիագումար նիստին: Հոկտեմբերի 30-31-ին տեղի է ունեցել Գերմանական DAAD կազմակերպության կողմից կազմակերպված միջազգային գիտաժողով, որինմասնակցում էին ԳԴՀ-ի և Վրաստանի առաջատար կրիմինոլոգները՝ «Քրեակատարողական ընթացակարգի կատարելագործման հիմնախնդիրները» խորագրով : Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆ. Հ.Խաչիկյանը և դոց. Ա.Մարգարյանը: Սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոսները մասնակցել են Մերձավոր Արևելքում գենդերային և անչափահասների հարցերով արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային համաժողով) թեմայով գիտաժողովին՝ կազմակերպված Կառլտոնի համալսարանի կողմից (Կանադա) (26-29 ապրիլի, 2019թ. Ստամբուլ, Թուրքիա)՝ հանդես գալով զեկուցումներով:

Մեր դասախոսները հանդես են եկել դասախոսություններով նաև արտերկրում, օրինակ՝ Erasmus Plus ծրագրի շրջանակներում Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա. Թավադյանը գտնվել է Լեհաստանի Բյալիստոկ քաղաքի համալսարանում

հանդես է եկել դասախոսությամբ, Քրեական իրավունքի ամբիոնի դոցնտ Ա. Մարգարյանը՝ դասախոսություններով հանդես է եկել Լյուբլյանայի համալսարանում:

Քրեական իրավունքի և քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոսները մասնակցում են Անչափահասների հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՀ ԳՊԿ կողմից ֆինանսավորվող թեմային: Հաշվետու ժամանակահատվածում Քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի մի քանի ներկայացուցիչներ ներգրավված են եղել Ամերիկյան Հարթլանդ Ալայանս կազմեկրպության հետ համատեղ իրականացվող դրամաշնորհային ծրագրին՝ տարածաշրջանում անրափահասների իրավունքների ուսումնասիրության ոլորտում:

3. Ուսանողների և մագիստրանտների հետ տարվող աշխատանքներ՝

Հաշվետու ժամանակահատվածում բավական ակտիվ են եղել նաև ուսանողական կառույցները : ՈՒԳԸ-ն պահպանել է իր առաջատար դիրքերը ԵՊՀ-ում:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է ուսանողական գիտական զեկուցումների նստաշրջան:

Ուսանողների համար կազմակերպվել են այցեր պետական և մասնավոր կառույցներ, անցկացվել են բաց դասեր: Մանսավորապես՝ «ՀՀ ընտրական իրավունք» և «Ընտրական իրավունքի սահմանադրական և կոնվենցիոն երաշխիքները» առարկաների շրջանակներում 2019թ. մայիսի 21-ին դոցենտ Հ.Ենգոյանի ղեկավարությամբ իրականացավել է այցելություն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որտեղ կազմակերպվել է «Բաց դաս» ԿԸՀ նախագահի և անդամների մասնակցությամբ: Նմանատիպ այցելություններ են իրականացվել այլ կառուցներ, մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Ուսանողները այս ժամանակաշրջանում ակտիվորեն ներգրավվել են իրավագիտության ֆակուլտետի և մեր արտասահմանյան գործընկերներ-կազմակերպությունների (GIZ, IRZ, Vision-Armenia և այլն) կազմակերպած ամառային և աշնանային դպրոցների՝ վարչական իրավունքի, սահամանդրական իրավունքի, ինչպես նաև փախստականների իրավունքի գծով (70-ից ավել ուսանող):

ա) Մրցույթներին մասնակցություն.

Այս տարի մեր ուսանողական թիմերը ակտիվորեն և հաջողությամբ մասնակցել են ինչպես միջբուհական, այնպես էլ միջազգային մի շարք մրցույթների:

1. Մասնավորապես, արդեն չորրորդ անգամ անընդմեջ ֆակուլտետի ուսանողները մասնակցել են գերմնական IRZ կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության

հետ համատեղ կազմակերպվող՝ քրեական իրավունքի և դատավարության արդի հիմնախնդիրներին նվիրված՝ միջբուհական դատախաղ- մրցույթին, որտեղ այս տարի եզրափակիչ փուլ են դուրս եկել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի երկու թիմերը՝ կրկին հաղթողի գավաթը բերելով ԵՊՀ:

2. 2019թ. ապրիլին ԵՊՀ թիմերը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ամբիոնի դասախոս Ն.Ավագյանի ղեկավարությամբ մասնակցել են Հայաստանի Ամերիկյան Համալսարանում տեղի է ունեցած մտավոր սեփականության իրավունքի դատախաղ մրցույթին, որտեղ թիմերի մեկը ճանաչվել է հաղթող:

3. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆ. Ա.Հայկյանցի և դոց. Ա. Թավադյանի ղեկավարությամբ ԵՊՀ թիմը 2019թ. ապրիլին մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցած առևտրային արբիտրաժին նվիրված դատախաղ մրցույթին և զբաղեցրել առաջին տեղը:

4. ԵՊՀ թիմը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Գ. Բեքմեզյանի մասնակցությամբ 2019թ ապրիլի 27-ից 28-ը մասնակցել է Ֆինանսական հաշտարարի գրասենակի կողմից կազմակերպված ապահովագրական իրավունքին վերաբերող դատախաղ-մրցույթին և զբաղեցրել առաջին մրցանակային տեղը:

5. ԵՊՀ թիմը հաղթող է ճանաչվել նաև 2019 թ.-ի ապրիլի 26-28-ը Կարմիր Խաչի կողմից կազմակերպված միջազգային մարդասիրական իրավունքի դատախաղ- մրցույթում:

6. Վերջինը, ընդամենը մի քանի օր առաջ ֆակուլտետի 6 թիմեր մասնակցեցին առաջին անգամ ELSA-ի կազմակերպվող ՄԻԵԴ-ի դատախաղ-մրցույթին և նրանցից մեկը՝ երրորդ կուրսի ուսանողներից ձևավորված թիմը գրավեց առաջին տեղը:

Հաշվետու ժամանակահատվածում Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական թիմերը ՀՀ-ը ներկայացրել են նաև միջազգային դատախաղ-մրցույթներում, մասնավորապես՝ ԵՊՀ թիմը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Գ. Պողոսյանի ղեկավարությամբ 2019թ ապրիլին ԱՄՆ-ում մասնակցել է Ֆիլիպ Ջեսափի անվան դատախաղ մրցույթին: Հուլիս ամսին մեր թիմերը մասնակցել են են նաև Նյուրենբերգի դատախաղ-մրցույթին, ԵՊՀ ուսանողները և ասպիրանտները՝ Հայաստանի հավաքական թիմի կազմում ներկայացել են Վիեննայում անցկացվող «Վիլլեմ Ս. Վիս միջազգային առևտրային արբիտրաժի» մրցույթին՝ մինչ այդ հաղթահարելով նաև Թբիլիսիում կայացած տարածաշրջանային փուլը: Իրավագիտության ֆակուլտետի ուսանողները ներկայացված են եղել նաև Jean Pictet մրցույթում :

Միջազգային մրցույթների մասնակցությունը կրում է շարունակական բնույթ և նաև այդ հարթակներում առավել լավ հանդես գալու նպատակով՝ 2019-2020 ուսումնական

տարում արդեն Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ Գրիգոր Զոբանյանի կողմից անցկացվում է անգլերենով՝ դատախաղնրին մասնակցելու հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթաց :

4. Կադրերի պատրաստում և վերապատրաստում՝

ա) Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք.

Բնականաբար, կրթության որակի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ֆակուլտետում կադրերի պատրաստման հարցը: Կրկին, պահպանվում է կադրերի հոսունության միտումը, ինչը բնական գործընթաց է և մի կողմից նպաստում է ֆակուլտետի հեղինակությանը, մյուս կողմից՝ ձևավորում է ֆակուլտետը նոր կադրերով համալրելու անհրաժեշտություն:

Լրջագույն խնդիր է դառնում Իրավագիտության ֆակուլտետի հիմնական դասախոսական կազմի սոցիալական երաշխիքների ապահովման, աշխատանքային պայմանների բարելավման հարցը: Կադրային հոսունությունը կանխելու, ֆակուլտետում դասավանդող փորձառու դասախոսների համար դասախոսական աշխատանքը նախապատվելի, իսկ երիտասարդների համար՝ գրավիչ դարձնելու կարևորագույն նախապայմաններից մեկը կայուն սոցիալական երաշխիքներն են, որոնք, սակայն, ակնհայտորեն բավարար չեն դասախոսի աշխատանքը գրավիչ դարձնելու ամար: Այս խնդրին հրատապ լուծում է պետք տալ:

Կարևոր է նաև դասախոսական կազմի ներկայացուցիչների աշխատանքային պայմանների բարելավումը: Ներկայումս դասախոսական կազմի ներկայացուցիչները չունեն ինքնուրույն աշխատասենյակներ, մինչդեռ առանձնացված, մեկուսացված աշխատանքային տարածքն անհրաժեշտ պայման է արդյունավետ ուսումնական, գիտահետազոտական աշխատանք իրականացնելու համար: Կանոնակարգամն կարիք ունեն նաև ուսանող-դասխաոս շփման ժամերը: Ներկայումս դա իրականացվում է անընդհատության սկզբունքով, ինչն էլ օրվա աշխատանքային ժամերին դասախոսին գործնականում զրկում է կենտրոնանալու և հետազոտական աշխատանք իրականացնելու հնարավորությունից: Այդ առումով, անհրաժեշտ է ներդնել ուսանող-դասախոս շփման հստակ ժամերի մեխանիզմը:

Նաև կարևորվում է դասախոսի օգնականի ինստիտուտի ներդրման հարցը: Նման կարգավիճակ կարող են ունենալ ասպիրանտները, ովքեր կունենան պարտականություն՝ աջակցել դասախոսին՝ հետազոտություններ իրականացնելիս, ուսանողների հետ անմիջական շփումն ապահովելիս: Դա նաև նրանց համար լավ փորձառնություն կլինի՝ հետագա դասախոսական և գիտահետազոտական գործունեություն ծավալելու համար:

Ներկայումս ֆակուլտետն ունի 30-ից ավել առկա և հեռակա ասպիրանտ և հայցորդ, ովքեր ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացին: Հաշվետու ժամանակահատվածում պաշտպանվել են 4 թեկնածուական ատենախոսություններ, սակայն չունենք դոկտորական ատենախոսության ոչ մի պաշտպանություն:

Ֆակուլտետում ուսումնական գտործընթացի կազմակերպման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ ևս մեկ նորարարություն՝ դեկանի աշխատակազմի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա առավել համակարգված լուծել ֆակուլտետի առջև ծագած խնդիրները, օրինակ՝ կոնկրետ անձինք պատասխանատու կլինեն միջազգային համագործակցության, մյուսները՝ ուսանողական կյանքի խթանման հարցերով և այլն:

բ) Ամբիոնի դասախոսների վերապատրաստումներ, գործուղումներ և այլ մասնագիտական գործունեություն

Կարևոր խնդիրներից է Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման հարցը : 2019-2020 թ.-ի 1-ին կիսամյակում անցկացվում է մասնագիտական վերապատրաստման դասընթացը, որը անցկացնում են քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանը և քրեական դատավարության ու կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ Սամվել Դիլբանդյանը : Ֆակուլտետի առանձին դասախոսներ դասախոսություններ են կարդում Արդարադատության ակադեմիայում, Պետական կառավարման ակադեմիայում Փաստաբանների դպրոցում և Եվրոպական իրավունքի կենտրոնում:

Միաժամանակ՝ ֆակուլտետի դասախոսական կազմի ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում են միջազգային տարաբնույթ ծրագրերի, մասնավորապես 2019 թ.-ի հունիսին Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա, Մարգարյանը մասնակցել է Ստրասբուրգում <Հանցավորության և քրեական արդարադատության ոլորտի վերաբերյալ վիճակագրության ժողովածուի> աշխատանքային խմբի աշխատանքներին, իսկ նոյեմբեր ամսին՝ Կլինիկայի ղեկավար Ք. Վարդանյանի հետ՝ Թբիլիսիում կայացած միջազգային հանդիպմանը, որտեղ քննարկվել է հետխորհրդային երկրների իրավաբանական դպրոցների միասնական ցանցի ստեղծման հարցը:

Ի դեպ, նախորդ տարի հիմք է դրվել մի նոր նախաձեռնության՝ քայլեր են իրականացվել ՀՀ իրավաբանական բուհերի համագործակցության ցանցի ձևավորման ուղղությամբ: Առաջիկա օրերին համագործակցության հուշագրեր կկնքվեն ՀՀ արդարադատության ակադեմիայի և ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հետ:

Ինչպես միշտ, ակտիվ է համագործակցությունը Արցախի պետական համալսարանի հետ, որի շրջանակներում աշնանը կայացավ պրոֆեսորադասախոսական կազմի

հերթական այցը Արցախի պետական համալսարան, որտեղ նրանք հանդես եկան դասախոսություններով:

5. Ֆակուլտետի գործունեության միջազգայացում՝

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Ֆակուլտետի միջազգայնացմանը, ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական կազմի առավել ակտիվ ներգրավվածությանը միջազգային համագործակցությանը: Միջազգայնացման ուղղությամբ գործունեության ծավալմանն արդեն իսկ անդրադարձ կատարվեց՝ մասնավորապես կապված թե օտարալեզու դասընթացների ներմուծման անհրաժեշտության, թե արտերկրում դասախոսություններով հանդես գալու, թե միջազգային կոնֆերանսներին մասնակցության, թե միջազգային միջոցառումներին ուսանողների մասնակցության կտրվածքով:

Այնուհանդերձ՝ անդրադառնամ նախ նոր կապերի հաստատմանը և առաջիկայում սպասվելիք ծրագրերին:

Գարնանը Նոթիինգեմի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ՀՀ փաստաբանների դպրոցում անգլիացի գործընկերների հետ համատեղ դասախոսություններ են կարդացել ֆակուլտետի քրեական իրավունքի, քերական դատավարության և կրիմինալիստիկայի, սահմանադրական և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոսները: Միաժամանակ՝ Նոթինգենի համալսարանի հետ հստակ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում համատեղ դիպլոմ շնորհող անգլալեզու մագիստրոսական ծրագիր սկսելու ուղղությամբ՝ միջազգային գործարարական իրավունքի ոլորտում:

Ընդամենը մի քանի օր առաջ՝ Մոսկվայում համագործակցության պայմանագիր ստորագրվեց Մոսկվային պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև, որը ընդգրկում է փոխշահավետ համագործակցության բավականին լայն շրջանակ:

Նման բանակցություններ ներկայումս վարվում են նաև Գերմանիայի 2 ԲՈՒՀ-երի հետ՝ համատեղ կամ կրկնակի դիպլոմ շնորհող, օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագիր ներմուծելու ուղղությամբ:

Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնը 2017 թ.-ից աշխատում է Շվեդիայի Լինկոպինգի համալսարանի դասախոս Հերբերտ Ջակոբսոնի հետ գրանտային ծրագրի մշակման ու ներկայացման վրա, որի արդյունքում մոտ օրերս տեղի կունենա շվեդ գործընկերների այցելություն Երևան՝ բանակցելու և համագործակցության ծրագիր մշակելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում պայմանավորվածություններ են ձեռք բերվել Վրաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի մի շարք ԲՈՒՀ-երի, մասնավորապես՝ Հռոմի, Էքս են Պրովանսի, Վրաստանի Եվրոպական և Թբիլիսիի պետական համալսարանների ներկայացուցիչների հետ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ, մի մասի հետ կնքվել են համագործակցության հուշագրեր:

Որպես թերություն, սակայն, կացանկանայի նշել, որ ոչ միշտ է, որ այդ հուշագրերը հետևողականորեն կյանքի են կոչվում՝ դառնալով համատեղ հետազոտական ծրագրեր, հրատարակություններ կամ միջոցառումներ: Այս մոտեցումը, կարծում եմ, վերանայման կարիք ունի և պետք է դեկանի նախատեսվող աշխատակազմում առանձնացված լինեն այս հուշագրերի բովանդակությունը կյանքի կոչելուն հետևող, դրանց իրականացման պատասխանատու անձինք:

Մասնավորապես, ներկայումս միջազգային կառույցների հետ բանակցություններ են վարվում երկու գիտահետազոտական կենտրոններ հիմնելու ուղղությամբ՝ Շվեդիայի Ռոուլ Վալլենբերգ ինստիտուտի աջակցությամբ՝ մարդու իրավունքների, իսկ Կարմիր Խաչի Երևանյան գրասենյակի հետ ՝ Մարդասիրական իրավունքի կենտրոններ բացելու ուղղությամբ: Սակայն, կրկին, խնդիրը հանգում է դրանց համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսներին, սենյակային պայմաններին:

Կցանկանայի անդրադառնալ ֆակուլտետի միջազգայնացման այն ոլորտներին, որոնք դեռևս լուրջ ուշադրության կարիք ունեն, մասնավորապես՝

ա/ արտասահմանյան երկրների համալսարաններում դասախոսություններով ավելի հաճախ հանդես գալուն և մեր ԲՈՒՀ-ում օտարերկրացի դասախոսներին ոչ թե էպիզոդիկ, այլ շարունակական դասավանդմանը ներգրավելուն,

բ/ միջազգային գիտաժողովներում գիտական հետազոտության արդյունքները ներկայացնելուն և միջազգային պարբերականներում հրատարակություններին,

գ/ միջազգային հետազոտական համատեղ ծրագրերին մասնակցությանը:

Թեև մնշված ոլորտներում առանձին աշխատանքներ իրականցվել են, սակայն ֆակուլտետի միջազգայնացմանն ուղղված աշխատանքները դեռևս գոհացուցիչ չեն:

Իհարկե, ֆակուլտետի դասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցում են միջազգային միջոցառումների, սակայն դրանք առավելապես էպիզոդիկ բնույթ են կրում, չեն նպաստում հետագա գիտական կապերի ձևավորմանն ու կայուն համագործակցության զարգացմանը: Ցածր է գիտական կոնֆերանսներին զեկուցումներով հանդես գալու, միջազգային պարբերականներում հրատարակություններ ունենալու հաճախականությունը:

Այս առումով, փորձել ենք խնդիրը լուծել, յուրաքանչյուր ամբիոնի համար 1-2 տարին մեկ միջազգային բնույթի միջոցառում կազմակերպելու պարտականություն սահմանելով: Արդյունքները ակնհայտ կլինեն առաջիկայում, սակայն Քրեական իրավունքի ամբիոնը արդեն իսկ 2 նման միջոցառում իրականացրել է 2019 թ.-ի սեպտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշտվետվությունը գնահատել դրական:

Խորհրդի նախագահ ***Գ. Ղազինյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***